

Գևորգ Մտեփանյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
Միլիտարի և հայ գաղթօջախների պատմության բաժնի
առաջատար գիտաշխատող

ԱՐՑԱՍԱԿՆԱՅԵՐԻ ԴԵՐՈՒ ԲԱՔԿԻ ՆԱԿԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՆ-XX ՂԱՐԱՍԿԻԶԲ (ՀԱՍԱՌՈՑ ԱՎՆԱՐԿ)

Այսպիսով՝ Բաքվի նավթարդյունաբերության զարգացման ասպարեզում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել հատկապես արցախցիները, որոնք իրենց գործիմացության և անսպառ եռանդի շնորհիվ ձեռք են բերել մեծ հարստություն, նպաստել քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճմանը: Արցախցիներ էին խոշոր նավթահանքերի տերերը. եղբայրներ Առաֆեյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը, Մուսայել Շահգեդանյանը և շատ ուրիշներ:

Բանալի բառեր - Վարանդա, Բաքու, Կուրի ձախափնյակ, արցախահայեր, նավթարդյունաբերություն, հայերի ցեղասպանություն, «Մասիս», «Արարատ», «Անի», «Սևան»

Gevorg Stepanyan, Doctor of Historical Sciences, Professor
Institute of History of the National Academy of Sciences,
leading scientific worker of the Department of history of
Diaspora and Armenian communities

THE ROLE OF ARTSAXH ARMENIANS IN THE DEVELOPMENT OF OIL INDUSTRY OF BAKU AT THE END OF THE 19TH AND AT THE BEGINNING OF THE 20TH CENTURIES

Thus the people of Artsakh had their specific role in the development of oil industry of Baku. Thanks to their knowledge in this sphere and inexhaustible efforts, they have acquired great wealth and contributed to the prosperity of the economic and cultural life of the city. The people from Artsakh were the owners of major oil mines. The brothers Arafelyan, the Ghukasyans, the Krasilnikyans, Grigor and Joseph Tumayan brothers, Grigor Dildaryan, Musayel Shahgedanyan and many others were well-known among them.

Геворг Степанян,
Доктор исторических наук,
профессор Институт истории НАН РА,
ведущий научный сотрудник отдела истории
диаспоры и армянских общин
Mail. sasun-07@mail.ru

РОЛЬ АРЦАХСКИХ АРМЯН В РАЗВИТИИ НЕФТЯНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В БАКУ В КОНЦЕ 19-ОГО И НАЧАЛЕ 20-ОГО ВЕКОВ

Таким образом, народ Арцаха имел свою особую роль в секторе развития нефтяной промышленности Баку. Благодаря своим знаниям в той сфере и неисчерпаемым усилиям, они приобрели огромные богатства и способствовали процветанию экономической и культурной жизни города. Армяне из Арцаха являлись владельцами крупных нефтяных шахт. Среди них были известны братья Арафелян, Гукасяны, Красилникяны, братья Григор и Овсеп Тумаян, Григор Дилдарян, Мусаел Шахгеданян и многие другие.

Հետխորհրդային Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչության պայմաններում ադրբեջանցի պատմաբանները անցնել են լայնածավալ տեղեկատվական հարձակման: Ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը շարունակաբար փորձում է յուրացնել Արևելյան Այսրկովկասի տեղաբնակ ժողովրդների էթնոմշակութային և քաղաքական պատմությունը: Մինչդեռ հայ և օտարալեզու բազմաթիվ սկզբնաղբյուրները հավաստում են, որ Արևելյան Այսրկովկասում XX դարի երկրորդ տասնամյակի վերջում «Ադրբեջան» անվամբ արհեստածին պետությունում եկվոր թյուրք-օղուզների հետնորդների՝ 1930-ական թվականների վերջերից «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարները հաստատվել են տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, ուսիներ, թաթեր, թալիշներ, լեզգիներ և այլն) ցեղասպան քաղաքականության, ուժացման, քաղաքակրթական արժեքների կողոպտման ու ոչնչացման միջոցով: Ուստի սույն հոդվածի խնդրո առարկա շրջանակներում արցախցիների օրինակով ներկայացնենք հայերի ունեցած քաղաքակրթական ծանրակշիռ ազդեցությունը Կուրի ձախափնյակում և մերձկասպյան երկրամասում:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Արևելյան Այսրկովկասի՝ Կուրի ձախափնյակից մինչև Ալաշերտյան թերակղզի ընկած տարածքում հայերը բնակվել են վաղնջական ժամանակներից: Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութային ժողովուրդ՝ հայերը մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն¹:

Երկրամասի հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ է զբաղում Բաքու քաղաքը: Ալաշերտյան թերակղզու վրա կույզ եկած փոքրիկ և անհրապույր այդ բնակավայրը, 1859 թ. վերջերին դառնալով երկրամասային նահանգական քաղաք, աստիճանաբար դուրս է գալիս նահապետական պարփակվածությունից և ընդերքի հարստությունների շնորհիվ զարգանալով՝ բերդաքաղաքից դառնում է աչքի ընկնող առևտրական և տնտեսական կենտրոն: Բաքվի զարգացման համար վճռական նշանակություն ունեցավ թերակղզու նավթի պաշարները, որոնց արդյունահանման և արտահանման արդյունքում քաղաքը սկսեց զարգանալ որպես նավթարդյունաբերության խոշոր կենտրոն:

Բաքու քաղաքի աստիճանական զարգացման և քաղաքային բնակչության աճի հետևանքով նկատելի է դառնում նաև հայ բնակչության թվի անընդհատ աճ: Բաքվում XIX դարի 30-ական թթ. բնակվող հայ բնակչության վերաբերյալ մի հետաքրքիր վավերագիր է պահպանվել Հայաստանի ազգային արխիվում, որն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1838 թ. մայիսի 16-ին քաղաքում և արվարձանում հայ բնակչության շրջանում անցկացված ընտանեկան ցուցակագրության վերաբերյալ: Ըստ այդմ՝ հայերը բերդաքաղաքում և արվարձանում արդեն ունեին 69 տուն՝ 434 բնակիչ²: Ցուցակագրությունն ուշադրության արժանի է այն առումով, որ հստակ ցույց է տալիս Բաքուում արցախահայ համայնքի ձևավորման ակունքները: Այդտեղ գտել են ծագումով արցախցի այնպիսի ազգանուններ (Թումայան, Շահգեղանյան, Սերբերյակյան և այլն), որոնք հետագա տարիներին դարձան խոշոր առևտրաարդյունաբերողներ և հասարակական-քաղաքական գործիչներ:

Արցախահայերի թիվը Բաքվում առանձնապես աճեց XIX դարի 70-80-ական թթ. և XX դարի սահմանագլխին՝ նավթային վերելքի արշալույսին՝ ի հաշիվ Արցախի տարբեր գավառներից տեղափոխվածների: «Բազմաբնակիչների մեծ մասը, - գրում է «Տարազը», - գաղթականներ են, գլխավորապես Ղարաբաղից և Շամախուց: Նրանցից յուրաքանչյուրը բնականաբար իր հետ բերում էր իր ազգային սովորույթները, իր մշակույթն ու մտայնությունը»: Արցախից Բաքու պանդխտության մեկնող երիտասարդությունը հիմնականում եղել է Կարանդա գավառից: Ե. Լալայանը գրում է. «Պանդխտությունը, որ սաստիկ տարածված է գավառիս (Կարանդա - Գ. Ս.) բնակչության մեջ: Գլխավորապես պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրովսկ և Անդրկասպյան երկրները: Կարանդացուն տակավին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն՝ յուր նավթահորերով, գրավել և գերել է»³:

Եթե հարյուրամյակներ շարունակ հայերի համար Բաքուն մի հարմար վաճառանոց և նավահանգիստ էր, ապա XIX դարի կեսերից հայերը Բաքվում նաև արդյունաբերողներ էին, գործարանատերեր, հանքատերեր և այլն: Տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում հայ առևտրաարդյունաբերողներից շատերը Բաքվում հիմնեցին գործարաններ, ֆաբրիկաներ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Բաքվի խոշոր ձեռնարկատերերի շարքում մեծ տոկոս էին կազմում հատկապես հայ նավթարդյունաբերողները (Ալեքսանդր Մանրաշյանց, Փիլոնյան եղբայրներ, Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Ղուկասյան եղբայրներ, Ղորղանյան եղբայրներ, Օրբելյան եղբայրներ, Հովհաննես Միրզոյան, Գևորգ Լիանոսյան և շատ ուրիշներ): Տնտեսական կյանքում իրենց ունակությունների շնորհիվ նրանք նկատելի ներդրում ունեցան երկրամասի տնտեսական յուրացման և զարգացման դժվարին ու կարևոր գործում:

Հատկանշական է, որ Բաքվի առևտրաարդյունաբերության, մասնավորապես նրա գլխավոր ճյուղի՝ նավթարդյունաբերության զարգացման գործում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել արցախցիները⁴: Արցախցիներ էին խոշոր նավթահանքերի տերեր, եղբայրներ Առաֆեյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը, Սուսայել Շահգեղանյանը⁵ և շատ ուրիշներ: «Գաղտնիք չէ, - գրում է «Տարազը», - որ Բաքվի հայ հարուստները մի աննշան բացառությամբ, բոլորը Ղարաբաղցիներ են: Սուրանք գաղթելով Բազու՝ իրանց բնածին ընդունակությամբ եւ տոկունությամբ մի երեսուն-քառասուն տարույ ընթացքում շինել են այժմեան Բազու քաղաքը եւ ձեռք բերել ահագին հարստութիւն»⁶:

Առևտրական կապերով կապված լինելով Եվրոպայի և Ռուսաստանի հետ՝ արցախահայ առևտրաարդյունաբերողները առաջիններից էին, որ կանխազգացին նավթի նշանակությունն ու արժեքը և սկսեցին զբաղվել ու զարգացնել նրա արդյունաբերությունը: Արցախցի թերևս առաջին նախաձեռնողներից էր հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչ Պետրոս Մանչեյանը, որը դեռևս 1810 թ. կառավարության հետ համաձայնագիր էր ստորագրել, որպեսզի կապալի իրեն տրվեն Ղուբայի նավթահորերն ու ծովային ձկնորսարանները: Մինչև 1823 թ.՝ իր մահը, նա անընդհատ փորձել է նավթի հարուստ նոր հանքահորեր փորել⁷:

1868 թ. նավթարդյունաբերության բնագավառում որոշ քայլեր է ձեռնարկում Բաքվում հաստատված շուշեցի Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Դավիթի Լազարյանը⁸, որին Ռուսական կառավարությունը հատկացրել էր մի փոքրիկ նավթադաշտ⁹: Հովհ. Լազարյանը Բաքվում զբաղվել է նաև

¹Մանրամասն տես՝ Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:

²Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 69-70:

³Լալայան Ե., Երկեր, հտ. 2, Արցախ, Երևան, 1988, էջ 136:

⁴Տես **Մարգա Հեյման**, Армяне. Краткий очерк их истории и современного положения, СПб., 1899, с. 151.

⁵Տես **Գլխաճառագրող Ա.**, Բազուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, «Հայրենիք», Պոսթըն, 1924, Բ տարի, մարտ, N 5, էջ 98-100, տես նաև «Արձագանք», Թիֆլիս, 1890, ապրիլի 15, N 8:

⁶«Տարազ», Թիֆլիս, 1892, N 25, էջ 350:

⁷Տես **Գրիգոր Վ.**, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 117:

⁸Լազարյանների գերդաստանը սերում էր Քաջարաղի մելիքական տոհմից: Այս գերդաստանում են ծնվել գեներալ-լեյտենանտ Հովհաննեսը, գնդապետ, պատմաբան Հակոբը և Բաբաջանը (ՀԱԱ, ֆ. 42, ց. 1, գ. 2, ք. 1-11, տես նաև **Պորո Բ.**, Генерал-адъютант Иван Лавылович Лазарев, Тифлис, 1900, տես նաև Դավիթյան Ա., Լազարյանների զինվորական փառքը, ԲՀԱ, Երևան, 1991, N 3, էջ 218-225):

⁹Տես Ե. Չաբենցի անվան գրականության և արվեստի բանգարան (ԳԱԹ), Տ. Նազարյանի ֆոնդ, գ. 233, տ. 4, ք. 19:

բարեգործությամբ՝ պարբերաբար նվիրատվություններ կազմակերպելով «Բաքվի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությանը»¹: Բաքվի նավթարդյունաբերության մեջ առանձնանում էին նաև արցախցիներ Սամվել Բաղիրյանը և Հարություն (Արտեմ) Մաղաթյանը, որոնք, 1878 թ. միանալով մի ռուս արդյունաբերողի, Բրունո դե Բուրի հետ հիմնում են «Կասպից ընկերություն» անունով ֆիրման²:

Բաքվի նավթադաշտերի հայ խոշոր սեփականատերերի շրջանում հատկապես առանձնանում են շուշեցի Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Ղուկասյան եղբայրները: Սրանց նավթաբիզնեսի գործունեության հիմքը սկսել էր ավագ եղբայրը՝ Պողոսը, որ, 1878 թ. Շուշիի գալով Բաքու, իր ձեռներեցությամբ ու բանիմացությամբ հիմք է դրել իրենց արդյունաբերությանը և դարձել Բաքվի մեծահարուստներից մեկը: Նա նախ 27.000ռ. ձեռք է բերում Սամվել Բաղիրյանի մասնաբաժինը, ապա՝ Հարություն Մաղաթյանինը և ինքն էլ շուտով սկսում ընկերակցել Բրունո դե Բուրին: Աստիճանաբար զարգացնելով նավթային իրենց բիզնեսը՝ Ղուկասյանները հետագայում՝ իննը տարի անց, առաջնակարգ դիրք են գրավում նավթարդյունաբերության մեջ և արդեն 1887 թ. 2 մլն.ռ. հիմնադիր կապիտալով վերածվում են բաժնետիրական ընկերության³: Նավթի արդյունահանման բնագավառում ոչ պակաս դերակատարություն ունեին նաև Պողոսի եղբայրները՝ Հակոբը, Աբրահամը և Արշակը, որոնք, արագորեն ծանոթանալով նավթաբիզնեսին, էլ ավելի նպաստեցին ընկերության տնտեսական զարգացմանն ու հզորացմանը: 1888 թ. Բրունո դե Բուրի մահից հետո «Կասպից ընկերություն» լիակատար սեփականատերերը դարձան Ղուկասյան եղբայրները՝ ձեռքի տակ ունենալով խոշոր կապիտալ⁴:

Նավթի արդյունաբերության մեջ Պողոս Ղուկասյանի ձեռնարկած արդյունավետ գործունեության շնորհիվ նրա համբավը Կովկասի վաճառականության շրջանակներից լայն տարածում գտավ նաև Ռուսաստանում և այլուր՝ դառնալով համառուսաստանյան չափանիշներով նավթարդյունաբերող առաջին հայը: 1891 թ. Պողոս Ղուկասյանը նախագահում է «Բաքվի նավթարդյունաբերողների միությունը», այդ պաշտոնը 1896 թ. մինչև իր մահը՝ 1917 թ., ղեկավարում է նրա կրտսեր եղբայրը՝ Արշակը⁵:

Շարունակելով առևտրարդյունաբերական իր գործունեությունը՝ Պ. Ղուկասյանը ռուս արդյունաբերող Ս. Յակովլևի հետ միասին 1897 թ. 1 մլն.ռ. հիմնադիր կապիտալով հիմնում է «Կասպից խողովակամուղը», որն իր բազմաձյուղ ցանցերով գործարաններին և քաղաքին մատակարարում էր անհրաժեշտ քանակությամբ ջուր: Ծավալելով լայնասարքեզ գործունեություն՝ Պ. Ղուկասյանը Բաքվում հիմնեց նաև մի շարք ձեռնարկություններ, որոնց գործարկման արդյունքում առավել բարձրացվեց նավթարդյունաբերության արդյունավետությունը: Նրա անմիջական ջանքերով Բաքվում կառուցվեց մեքենաշինական մեծ գործարան, որն անհրաժեշտ քանակությամբ մեքենաներ, հորատող սարքեր և խողովակներ էր պատրաստում Կովկասի արդյունաբերական տարբեր ձեռնարկությունների համար⁶:

Բաքվում նավթարդյունաբերության զարգացման գործում իրենց մեծ ներդրումն ունեին նաև շուշեցի եղբայրներ Առաֆեյանները, որոնք կարճ ժամանակամիջոցում ձեռք էին բերել հսկայական հարստություն⁷: Շուշեցիներ էին նաև խոշոր նավթահանքերի տերեր Կրասիլնիկյան, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը և Սուսայել Շահգեղանյանը (Շահգեղանով)⁸: Վերջինս ազակիցներ Բաղդասար և Կիկիսա Շահգեղանյանները զբաղվել են ոչ միայն առևտրարդյունաբերությամբ, այլև 1894 թ. ընտրվել են Բաքվի Քաղաքային Դումայի իրավասուներ⁹: XIX դարավերջին Կրասիլնիկյան և Առաֆեյան եղբայրների նավթարդյունաբերական ֆիրմաների միավորմամբ գործում էր «Եղբ. Կրասիլնիկյան և Ս. Առաֆեյան» ընկերությունը¹⁰:

Բաքվի նավթարդյունաբերության զարգացման գործում մեծ դերակատարություն են ունեցել նաև Թումայան եղբայրները, որոնք Բաքվում հիմնել են «Եղբ. Թումայանց» նավթարդյունաբերական ընկերությունը: Իր գործունեությամբ լայն ճանաչում էր ձեռք բերել հատկապես Գրիգոր Թումայանը: Թումայան գերդաստանը, Բաքվից բացի, վիթխարի կարողությունների հասնող անշարժ գույք էր ձեռք բերել նաև Թիֆլիսում¹¹:

Բաքվում այդ նույն ժամանակաշրջանում իր գործունեությունն էր ծավալել նաև շուշեցի մեկ այլ հայ առևտրարդյունաբերող՝ Միքայել Արամյանը, որը, 1884 թ. Շուշուց գալով Բաքու, սկզբնական շրջանում զբաղվում է շաքարի առևտրով, այնուհետև ընկերանալով Գերասիմ Թումայանի, Առ. Ծատուրյանցի, Արաֆեյան եղբայրների հետ՝ մուտք է գործում նավթարդյունաբերության ոլորտը՝ հիմնելով «Առ. Ծատուրյան և մյուսներ» ընկերությունը, որը տարեկան արտահանում էր 4 մլն.փուլ ճավթ և քուրբային տարբեր յուղեր¹²:

¹ Պատմություն Բազուի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը), կազմեց՝ Ա. Գալստեանց, Բազու, 1895, էջ 4-5, 59:

² Стен Баку и его окрестности, Тифлис, 1891, с. 28-29, տե՛ս նաև Սարգիսյան Ա., Աղեքսանդր Մանթաշեանց. Մեծ - վաճառականն եւ բարեգործը: Յիշողություններ իր մահուան 20 ամեակի առթիւ, Վիեննա, 1931, էջ 42:

³ Стен նույն տեղում:

⁴ Стен Баку и его окрестности, с. 28-29.

⁵ Стен Սարգիսյան Ա., նշվ. աշխ., էջ 46-47:

⁶ Ի դեպ, Պ. Ղուկասյանին էր պատկանում նաև Բաքվում առաջին էլեկտրամեքենաշինական գործարանի կառուցման պատիվը, որի ղեկավարությունն իրականացնում են նրա հմուտ և գործիմաց որդիները: Բաքվի Ստարո-Պոլիցեյսկայա փողոցում գտնվող նրա ֆիրման առաջիններից մեկը սկսեց նավթարդյունաբերության համար վաճառել արտասահմանյան տարատեսակ սարքավորումներ, շարժիչներ և էլեկտրակայաններ: Նա առաջինն էր, որ Բաքվում ստացավ արդյունաբերական զագ (տե՛ս նույն տեղում, էջ 47): Ղուկասյան եղբայրները ձեռնարկատիրական լայն գործունեություն ծավալելով, 1916 թ. աշնանը Բաքվում իրենց ձեռքում կենտրոնացրին հետևյալ խոշոր գործարանները. էլեկտրատեխնիկական «Գինամո», մարտկոց արտադրող «Ռեկս», «Բետա» և «Արմատուրային-էլեկտրական միությունը»: Հսկողություն սահմանելով այդ արտադրությունների վրա՝ Ղուկասյան ընտանիքը կարողանում է առաջատար դիրք գրավել ողջ Ռուսաստանում էլեկտրատեխնիկական արդյունաբերության բնագավառում (տե՛ս Монополия в металлургической промышленности России 1900-1917 гг. (документы и материалы), М-Л, 1963, с. 488.):

⁷ Стен Գալստեանց Ա., Բազուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, «Հայրենիք», Պոսթըն, 1924, Բ տարի, մարտ, թիւ 5, էջ 98:

⁸ Стен նույն տեղում, էջ 99-100:

⁹ Стен Кавказский календарь на 1900 г., Тифлис, 1889, с. 176-177.

¹⁰ Стен Սարգիսյան Ֆ., Նախալին քրոնիկ. Բիբի-Էյբաթի պետական նախալին հողերի աճուրդը (II), «Մուրճ», Թիֆլիս, 1899, N 2-3, էջ 308-313:

¹¹ Стен «Մուրճ», Թիֆլիս, 1899, N 2-3, էջ 256:

¹² Стен Սարգիսյան Ա., նշվ. աշխ., էջ 65:

1889 թ. Բաքվում գրանցված 69 նավթարդյունաբերական ընկերություններից 34-ը հայկական էին, որոնք արդյունահանել են 93.891.585 փուֆ նավթ և լուրջ մրցակցության մեջ էին գտնվում «Նորել եղբ.» և «Կասպից-Սևծովյան ընկերություն (Ռոտշիլդ)» ֆիրմաների հետ:

Բաքվում արցախցի առևտրաարդյունաբերողները, նավթի վերամշակման և արդյունաբերական այլ գործարաններ ունենալուց զատ, ունեցել են նաև նավամատուցներ և սեփական շքեղ շոգենավեր¹: Սեփական շոգենավերի, այդ թվում նաև օվկիանոսային նավերի տերեր էին Ղուկասյան եղբայրները և Գ. Թումայանը²: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաև արցախցի առևտրաարդյունաբերողների և հայկական այլ ընկերությունների «Մասիս», «Արարատ», «Անի», «Սևան», «Արմենիա», «Արմենակ», «Արցախ», «Հայաստան», «Շուշանիկ», «Րաֆֆի», «Արաքս», «Կան», «Մուշ», «Ջանգի» և հայանուն այլ մարդատար և ապրանքատար շոգենավերն ու առգաստանավերը³:

Անհրաժեշտ է նշել, որ Բաքվի հայ դրամատերերը, նրանց թվում նաև արցախցիները, Բաքվից բացի, վիթխարի կարողությունների հասնող անշարժ գույք էին ձեռք բերել նաև Թիֆլիսում՝ այդտեղի լավագույն փողոցներում (Միքայելյան, Գոլովինսկի, Սոլովակի թաղում և այլն) գնելով կամ կառուցելով շքեղ տներ⁴: Այդ նպատակով իրենց կապիտալներն էին Թիֆլիսում ներդնում Ա. Ղուկասյանը, Գ. Թումայանը, Գր. Առաքելյանը, Կ. Կրասիլնիկյանը, Ս. Բուդաղյանը, Գևորգ և Ալեքսանդր Լալայանները և ուրիշներ⁵: Բաքվի հայ դրամատերերի այս քայլը յուրովի մրցակցություն էր առաջ բերում Թիֆլիսի տնտեսների շրջանակներում: Ինչպես գրում է «Մուրճը». «Այդ հանգամանքը մեծապես ազդել է Թիֆլիսի տների և հողերի գների վրայ, որովհետև բաքուեցիք, փողով առատ և տներից ոչ մեծ եկամուտների ակնկալությամբ ունեցողներ են, զգում են տներ ոչ սոցա այժմ տուած եկամուտների համաձայն, այլ շատ ավելի թանկ, միայն թե տները լինեն քաղաքի լավագույն փողոցներում...»⁶:

XX դարի սկզբներին Բաքվի հայ դրամատեր խավի գրեթե բոլոր ներկայացուցիչներն իրենց անբավ հարստությունից բաժին էին տրամադրում բարեգործական նպատակների համար: «Չնայելով տեղացի հայոց սակավուրիսնը, նոքա շատ աշխատասեր և հոգասեր են և իրեանց քանի մի բարի գործերովը նախադաս համարուելու են այլ քաղաքների հայերէն»⁷, - ասված է «Տոմար ընտանեկան» օրացույցում: Փաստերը վկայում են, որ Բաքվի հայ բարերարները, նրանց թվում նաև արցախցիները, մայր հայրենիքի հետ այնքան սերտորեն էին կապված, որ նրանցից շատերը, օգտագործելով իրենց դիրքն ու հեղինակությունը, գանազան առիթներով դրամական նվիրատվություններով զգալի օգնություն են ցուցաբերել հարազատ ժողովրդին: Մեկենասությունը հիմնականում ուղղվում էր հիվանդանոցների և դպրոցների կառուցմանը, ազգային թատրոններին և մշակութային այլ օջախներին, աղետյալներին ու որբերին, նյութական օգնություն էր տրամադրվում այդ նպատակով ստեղծված բարեգործական ընկերություններին և այլն: Բարեգործության իր մասշտաբներով հատկապես աչքի էին ընկնում Կրասիլնիկյանց և Ղուկասյան եղբայրները, որոնք իրենց կուտակած մեծ կարողությունից բավականին գումարներ են ծախսել այդ նպատակներով: Հատկանշական է, որ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման հենց առաջին տարիներին Բաքվի հայ մեծահարուստները մեծազումար նվիրատվություններ արեցին՝ զիտական և լուսավորական հաստատություններ բացելու համար: Այսպես, Արշակ Ղուկասյանը 5.000.000 ռ. կտակեց հայկական համալսարանի հիմնարկման համար⁸: Արցախցի առևտրաարդյունաբերողները Բաքվի առևտրաարդյունաբերության բնագավառում իրենց կայուն դիրքը պահպանեցին մինչև դրա ազգայնացումը⁹:

Այսպիսով՝ ակներև է, որ ներկայիս Ադրբեջանի արդյունաբերության մի շարք բնագավառների, մասնավորապես զլխավոր ճյուղի՝ նավթարդյունաբերության զարգացման հիմքում ընկած են հատկապես հայ առևտրաարդյունաբերողների և մասնավորապես արցախահայերի երկար տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ ձեռք բերված արդյունաբերական միջոցները:

Երկրամասի հայ բնակչության բնականոն կյանքը խաթարվեց 1918 թ. մայիսից, երբ թուրքական զորքերը, Բաքվի դեմ արշավանքի ընթացքում կոտորածի ու տեղահանության ենթարկեցին Կուրից մինչև Ապշերոն ընկած հայկական գյուղերի բնակչության զգալի մասին: 1918 թ. սեպտեմբերի 15-ին, զրավելով քաղաքը, թուրք սպաների դեկավարությամբ և մուսավաթական կառավարության ներքին գործոց նախարար Բ. Խան-Ջիվանշիրի օժանդակությամբ, թուրք-թաթար հրոսակները երեք օր շարունակ (15-ից-17-ը) կոտորեցին ավելի քան 30.000 հայերի¹⁰: Կոտորածը համընդհանուր էր, ավերն ու թալանը՝ նույնպես: Թուրքերը թալանում էին ոչ միայն առանձին անձանց, այլև կազմակերպությունների ունեցվածքը: Բաքվի հայ դրամատերերն ու առևտրաարդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, կարողացել էին Բաքվում տեղ դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական կուտակումներ՝ ի վերջո դրանք ծառայեցնելով հենց այդ երկրի զարգացմանը: Եվ ահա բոլոր հայերի առանց խտրականության ոչնչացումն ու կողոպուտը թուրք-թաթար մարդասպաններին հնարավորություն

¹ Տե՛ս «Նոր-դար», Թիֆլիս, 1890, օգոստոսի 8, N 122:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, ք. 29, տե՛ս նաև՝ **Микаелян В., Мирзоян С.**, Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX-первые десятилетия XX вв.), ԼՀԳ, Երևան, 1990, N 2, էջ 77:

³ Տե՛ս «Արօր»-ի պատկերագրող օրացույց 1894 թուականին Քրիստոսի, Բաքու, 1893, էջ 35, տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, գիրք Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1903-1905, էջ 362:

⁴ Տե՛ս **Туманов Г.**, Заметки о городском самоуправлении на Кавказе, Тифлис, 1902, с. 83.

⁵ Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, N 2-3, էջ 256, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, ք. 11:

⁶ «Մուրճ», Թիֆլիս, 1899, N 2-3, էջ 256:

⁷ Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հտ. Ա, աշխատասիրեաց Ս. Սրբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 122:

⁸ Տե՛ս Խաչատուրեան Յ., Երեք ամիս ի Կովկաս, Թեոդիկ, Ամենուն Տարեցույցը, Կ. Պոլիս, Ժ-ԺԳ տարի, 1916-1920, էջ 200:

⁹ Առաջին անգամ դա կատարվեց Բաքվի Ժողովմխորի 1918 թ. հունիսի 2-ի դեկրետով, իսկ երկրորդ անգամ՝ Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. մայիսի 24-ի դեկրետով: Ազգայնացվեցին ավելի քան 272 նավթարդյունաբերական մասնավոր ձեռնարկություններ, և դրանց բազայի վրա կազմավորվեց արդրբեջանական «Ազնեֆտ» պետական միավորումը (- տե՛ս Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հտ. 5 (1918 թ. մայիսի 29 սեպտեմբերի 20), Երևան, 1978, էջ 59-64, տե՛ս նաև История Азербайджана, т. 3, ч. I, Баку, 1963, с. 241- 242, տե՛ս նաև Սահակ Տեր-Պաբրիեյան, Հողվածներ, Ճառեր, Կիստաթղթեր, Երևան, 1979, էջ 185-186):

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99, տե՛ս նաև Генонд армян в Османской империи. Сборник документов под редакцией **М. Г. Нерсисяна**, Ереван, 1982, с. 524.

է ընծեռում հափշտակելու նրանց նյութական արժեքները: Նման ճակատագրի արժանացան «Եղբ. Թումայան», «Բաղդասար Հակոբյան և ընկ.» և առևտրաարդյունաբերական այլ ընկերություններ: Լիովին կողոպտվեցին Լալայան, Սարգսյան և մեծահարուստ այլ ընտանիքներ: 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին թուրքերը հափշտակեցին Ղուկասյան եղբայրներին պատկանող «Էլեկտրիչեսկայա սիլա» ակցիոներական ընկերությանը պատկանող գույքը՝ 155 մլն ռ. ընդհանուր արժողությամբ, «Քաղաքների միության» գույքը՝ 33 մլն ռ. արժողությամբ, «Կովկաս և Մերկուրի» շոգենավային միության, «Արևելյան միության ապրանքային պահեստներ», «Կովկասյան բամբակ» և ակցիոներական այլ ընկերությունների ու բանկերի ամբողջ գույքը: Հայերին պատճառած նյութական կորուստները հասնում էին հարյուրավոր միլիոնների¹: «Երկու ամսուայ «օրինական» ռեժիմը նոյնքան - աղէտաբեր ու զարհուրելի էր հայկական տարրի համար, որքան երեքօրեայ պոգրոմներն ու վանդալիզմը գազանացած և աւազակաբարոյ ամբոխների...աստիճանական բնաջնջման եւ տնտեսական կործանման ու խեղձացման մի դրագունական քաղաքականութիւն հայութեան դէմ ուղուած»², - գրում է Բ. Իշխանյանը:

Ընդհանրացնելով նշենք, որ Կուրից մինչև Ապշերոն ընկած տարածքում հայերի, մասնավորապես արցախցիների քաղաքակրթական ավանդի ներդրմանը հակառակ՝ անդրալթայան տափաստաններից ներխուժած թյուրք-օղուզների հետնորդները (խորհրդային շրջանում՝ 1930-ական թվականների վերջերից հորջորջված «ադրբեջանցի»), 1918 թ. սեպտեմբերից «Ադրբեջան» արհեստածին կազմավորումում «ինքնահաստատվել» են տեղաբնիկ ժողովուրդների ուժացմամբ և հատկապես հայերի նկատմամբ ցեղասպան քաղաքականությամբ ու մշակութային արժեքների ոչնչացման ճանապարհով:

¹ Տե՛ս **Գեղամեանց Ե.**, Տաճիկները Կովկասում և Բագուի անկումը, սր. Բ, Բագու, 1919, էջ 85-86:

² **Իշխանեան Բ.**, Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, - 1920, էջ 8: